Այնտեղ, որտեղ փողանը միանում է ճակատի սրահի հետ, ընկած են չորս տապանաքարեր։ Տեղացիք հավատացնում են, որ դրանցից մեկը, ճակատին ավելի մոտիկ ընկածը, պատկանում է Դավիթ Բեկի աջակից Մելիք Փարսադանի որդի Պալի (Բալի) զորավարին, իսկ մյուսների մեջ պետք է որոնել Դավիթ Բեկին։

Եկեղեցու հարավային դուռը տանում է դեպի երկհարկ շենքը։ Երկու հարկերումն էլ կան կողք-կողքի, իրար զուգահեռ զույգ թաղակապ, համեմատաբար ցածրիկ զետեղարաններ, այն տարբերությամբ միայն, որ վերին հարկում նրանք հավասար երկարություն ունեն, իսկ ստորին հարկում դրսինը ավելի կարճ է։ Երևի ետևի ժայռը արգելք է հանդիսացել նրան ավելի խորը հասցնելու։ Ստորին հարկում միջնորմում թողված են երկու կամարակապ ցածր բացվածքներ, որոնց վերին հարկում համապատասխանում է մեկը, սակայն ավելի լայնը։ Այս երկար շենքն է եղել իսկական բնակարան, իսկ ստորին հարկը հատկացված է եղել տնտեսական պետքերին։ Վերին հարկի երկու սրահները այժմ առջևից պատ չունեն. արդյո՞ք այդ կողմից եղել է գուցե երկար (փայտե) պատշգամբ, որի քանդվելովը փուլ է եկել և պատը, այնքան էլ պարզ չէ։ Շենքի այս մասը հեռու չէ բերդի դարպասից և միաժամանակ բավականին մոտ է աշտարակին, որտեղ ջրի ավազանն է եղել։ Ջուրը բերված է եղել հեռավոր աղբյուրներից, դրանց ջրի մի մասը դուրս է բերված լեռնաբազուկի հակառակ կողմով մինչև այժմյան ճանապարհը և այժմ կոչվում է Ական ջուր։ Հանքերի վարչությունը այժմ բաց է անում այդ ջրի միլերը նրանց ակը գտնելու համար, քանի որ մտադրություն կա այդ իդեալական մաքրություն ունեցող խմելու ջուրը ամբողջովին անցկացնել մինչև հանքավայրը։

Ողջի (Օխչի) գետահովտի բերանի մոտ զետեղված Հալիձորի բերդը վերջին դարերում որոշ չափով իր վրա էր վերցրել Կապան քաղաքի ամրությունների դերը և վերջին ներկայացուցիչն է այդ ձորի պաշտպանական կառուցումների սիստեմի։ Նրա ռազմական նշանակությունը, ըստ տեղացիների վկայության, տևել է մինչև համեմատաբար նոր ժամանակները, երբ 1813 թ. Գյուլիստանի դաշնագրությամբ նա Ողջի գետի ամբողջ աջակողմյան տերիտորիայի հետ մնաց Պարսկաստանի պետական սահմանների մեջ՝ Ղարադաղի խանությանը ենթարկված։ Նա սկսեց դատարկվել այն օրից, երբ 1826 թ. Թուրքմենչայի դաշնագրությամբ սահմանը ետ քաշվեց հարավ, մինչև Արաքս, և այստեղ էլ հաստատվեց ռուսական անմիջական կառավարությունը։ Այդ ժամանակից ի վեր երկրի պաշտպանության պարտականությունը ստանձնեց արդեն նոր ապարատը, մշտական պետական զորքը, որը հետզհետե բեռնաթափեց կալվածատեր իշխաններին սեփական զինված ուժերով իրենց ստորադիր աշխատավորության թե կյանքը և թե գույքը պաշտպանելու պարտականությունից։ Մելիքները դադարեցին կատարել ռազմական ֆունկցիաներ, նրանց ամրությունների և բերդերի պետքը վերացավ։ Դրա հետ միասին փոխվեց նաև նրանց բնակարանների բնույթը, որը արդեն աչքի առաջ չուներ երկրի ապահովության համար հոգատարություն, այլ շարունակ աճող տնտեսական պետքերի բավարարումը։

Բաղքի պաշտպանական սիստեմի օրգանական մասն էր կազմում և Վանանավանքը, որը ծառայում էր որպես տեղական թագավորների և իշխանազուների թաղման վայր։ Վանքը հիմնված է 911 թ. Զագիկ իշխանի որդի՝ Վա-